

ՆՇԱՆԱԻՈՐ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑՔ

ՈՌԵՑՈՒՆ ԿԵՐՆԱԳ

Նոր մարդկային միտքը քիչ տարի առաջ սկսաւ զարգանալ մասնաւորապէս փորձառական գիտութեամբ՝ նորանոր գիւտոց և զարմանալիաց այնպիսի մեծ շարք մը երևան հանեց, որ այսօրուան օրս ամէն ոք իւր մտաց մէջ ինքիքին կը հարցունէ թէ այս յառաջագիմութիւն և զարգացումն ո՞ւր կանգ պիտի առնու. հարցում մը որոյ ոչ ոք կրնայ պատասխանել. զի մարդկային հանճարը իւր կարգին մէջ սահման և արգել չունի, բաց 'ի գերբնականէն և 'ի հակասականէն. այն ժամանակ միայն մարդկութեան համար սկսաւ գիտական ասպարիզին այն բեղուն և գործունեայ ասպարէզն, որ ներկայ ժամանակիս բնագորշմն և երևոյթն է. քան զամէն գիտութիւնս՝ նախ և առաջ բնաբանութիւն թօթափեց նախապաշարման բռնական լուծը. Գալիլէոս, Նիւթըն, և Քէլւինը ժէ դարէն սկսեալ՝ այս նոր և մեծ շէնքին հաստատուն հիմքը դրին, որով ներկայ դարուս մէջ՝ կրցանք զայն այնքան ընկերական պիտոյից օգտակար կերպով ծառայեցնել. Դեռ դար մը վերջը կը սկսի բնագիտութեան յառաջագիմութիւնը ջանիւք փրիսդլի և լափուաղիէի, այն ատեն միայն բնաբանութեան քով արժանաւորապէս կը դասի և բնագիտութիւն. և իւր ծագումէն և ոչ իսկ մի դար վերջը՝ արդէն իւր վարդապետական և փորձառական շէնքը կարծես աւարտած է. և մինչ մէկ կողմանէ փորձառական օրինաց գործադրութիւնը անհնարին արագութեամբ միջին դարու շատախօսութենէն և հնաւանդ կարծիքներէն կը գատէ կը բաժնէ, կը ստեղծէ երկու նորանոր և ամենաստոյգ գիտութիւններ, և մեր աչաց առջև կը պարզէ անհուն գանձ մը բնական օրինաց, որոնք մարդկութեան պիտի պտղաբերեն և ևս ապագային մէջ. տարբեր տեսակ վարդապետութիւն մ'ալ կամաց կամաց ձև և հաստատութիւն կ'առնու, որպէս զի այլոց նման՝ ինքն ալ յարութիւն առնու, թէպէտ քիչ մը ուշ, և ստոյգ գիտութեանց կարգն անցնի. — այս ինքն կենսաբանութիւնը:

Նիւթական կենաց գլխաւոր խնդիրը պարզաբանելու փա-

փագն և ջանքը՝ յայտնի է թէ մարդկութեան էական պիտոյից առաջինն է՝ հաւատք և վարդապետութիւն թէպէտ մասամբ կը պատասխանեն այս պիտոյից, սակայն դարերու ընթացքին մէջ չեն պակսիր նաև այնպիսի հանճարներ՝ որ կ'ուզեն թափանցել և հասկընալ այս էական խնդիրները, ինչպէս հնոց մէջ՝ իպպոկրատ, Արիստոտէլ, Լուկրետիոս, Գաղենոս և այլք բազումք բժիշկք և իմաստասէրք արաբական դպրոցին։ սակայն վերջինս նախապաշարմանց զոհ ըլլալով՝ առաջինն ալ նկատուած էր իբրև խոնարհ արուեստ մը և ոչ գիտութիւն։ Իսկ յետոյ փորձառականին զարգացմամբ՝ սա ալ իւր դարևոր թմբրութենէն կը զարթնու, և 'ի դրունս անդ իւր ծագման՝ մեծապէս կը զարգանայ ջանիւք և ձեռնտուութեամբ բազմաթիւ իտալացի բժշկականետաց։ Սակայն բժշկութիւնը՝ ոչ իբրև զբնարանութիւն և զբնագիտութիւն, այլ շատ զանդաղ և յամր է նորա ուսումնական և յառաջագիմական զարգացումը։ Թերևս նաև զայն մշակող գիտնոց անհամբրութենէն։ Բայց բնագիտական մեծամեծ և անհաւատալի գիտներէն վերջը՝ սա ալ իւր ծանր ընթացքն սկսաւ երազել և այնչափ որ մանաւանդ այս վերջին տարիներս չափն ալ անցուց։ Եւ նախ և առաջ, որչափ ծանօթութիւնք և դիտողութիւնք կը բազմանան՝ բժշկութեան մեծ ծառն ալ զանազան մանր ճիւղերու կը ստորաբաժանի, և ամէնն ալ առանձինն ուսումնասիրութեան առարկայ կ'ըլլան։ և այսպէս աշխատութեան բաժանմամբ՝ ուսմունքն ևս առաւել կը ծաղկի և իր բուն նպատակին կը դիմէ։ որ է՝ մարդկային ֆիզիզական կազմութեան ստոյգ ծանօթութիւնը և նորա ցաւոցն առջնն առնելու կամ գէթ մեղմացնելու միջոցներու ուսումնասիրութիւնը։ Այս գիտութիւնը մինչդեռ մէկ կողմէն բնախօսութեամբ և պարզ կամ կանոնաւոր մարդակազմութեամբ կը քննէ առողջ գործարանաւորութեան զանազան պաշտամունքը, և մանրամասնօրէն կը պարզէ մեր աչաց սուշ և կենաց ամենամանր պարագայներն, միւս կողմէն ախտաբանութեամբ և ախտագիտական մարդակազմութեամբ կ'ուսումնասիրէ և կը քննէ նոյն գործարաններն և գործողութիւններն ախտացեալ վիճակի մէջ։ կը սահմանէ մարդկութեան անհամար հիւանդութեանց և տկարութեանց սեպհական հանգամանքներն և տեսակներն, բայց մի և նոյն ժամանակ՝ ինսամիտ գլխով մը բնութեան հետ 'ի միասին կ'աշխատի և ամէն ջանք 'ի գործ կը դնէ՝ անոնց առջնն առնելու և կամ գէթ որոշեալ տեղ մը զայն սահմանելու։ Բժշկութեան՝ կամ թէ ըսենք մարդագիտութեան այս երկու ճիւղերն ալ՝ փոփոխակի զիրար կը լուսաբանեն և միմեանց ձեռնտու կը լինին։ բնախօ-

սութիւնը կանխաւ ախտաբանութեան համար երկիրը կը պատ-
րաստէ: իսկ սա յաճախ ախտացեալ և անկանոն գործարանա-
ւորութեան ուսումնասիրութեամբ՝ կը մատուցանէ առաջնոյն՝
կանոնաւոր գործարանաւորութիւնը սահմանելու միջոցները:

Ախտաբանական մարդակազմութեան՝ խանձարուրդն իտալիա
եղաւ: Մորկանի զայն հիմնարկեց իւր Յադագա պատձառաց և
տեղեաց ախտից (De sedibus et causis morborum) վարդապետա-
կան հրատարակութեամբ, զոր յետոյ Պաչելլի շատ լաւ սահ-
մանեց էջք հիմնական գիտութեան ըսելով: Սակայն նորա սյս-
քան խնամով պատրաստած երկիրը՝ անարգասաւոր մնաց, և
իտալական բժշկութիւնը՝ ցկէս ներկայ դարուս վարդապետա-
կան և միջնադարեան աւանդութեանց և խուզարկութեանց մա-
ռախլապատ հորիզոնին շուրջն յաճեցաւ: մինչդեռ 'ի Գերմանիա
և 'ի Գաղղիա կը պատրաստուէր այն զարմանալի վերանորո-
գութիւնը՝ որ բացաւ բժշկութեան համար գիտական և փոր-
ձառական խուզարկութեան գլխաւոր ճանապարհը: Գերմանա-
կան գաղափարն և միտքն որ արդէն պատրաստեալ էր փորձա-
ռականին և միջոցներու ուսումնասիրութիւնն լաւ կատարած էր,
բնութեան երևութիւն նրբաքնին դիտող և ուսումնասիրող, կա-
ռավարութեան և համալսարանաց ձեռնտուութեամբ գրգռել՝ և
յորդորեալ՝ ժամանակին կրցաւ տեսնել բժշկական ուսմանց մէջ
յոյժ արգասաւոր դաշտ մը ու մերձ 'ի պտղաբերութիւն: և իւր
զօրաւորագոյն և սրամիտ հանճարները՝ նախ քան զամենեւին
դիմեցին ուսումնական այս անծանօթ կամ քիչ ծանօթ բովոյց,
և կրցան առանց դժուարութեան բազմաթիւ ճշմարտութիւններ
և վարդապետութիւններ 'ի յայտ բերել:

Այսպիսեաց մէջ՝ ցարդ առաջին տեղին կը գրաւէ Ռուտովֆ
Վիրխով, որուն եօթանասներորդ տարեդարձն այս տարի մեծա-
հանդէս տօնեցին 'ի Պերլին, և որոյ մասնակցեցաւ բովանդակ գի-
տական աշխարհն: Այս կորովի և սրամիտ անձնաւորութիւնն՝
ամենամեծ և անընդհատ մասն ունեցաւ բժշկութեան գիտական
վերանորոգութեան նկատմամբ, և բազդ ունեցաւ իւր բազմա-
թիւ կարծեաց և վարդապետութեանց հաստատութիւնն և ընդ-
հանրանալն տեսնելու: Իւր գլխաւոր արդիւնքն է՝ մանրացուցին
դրական գործադրութիւնն յուսումնասիրութիւն ախտաբանա-
կան մարդակազմութեան: այս օգտուէտ գործիքին օգնութեամբ,
զոր արդէն բնապատումը սկսեր էին գործածել 'ի խուզարկու-
թիւն զաղտնեաց կենդանական և բուսական դասուց, բոլորովին
նոր գիտութիւն մը հիմնեց. — ախտաբանական հիւսուածա-
բանութիւն, — այսինքն մանրաքնին ուսումնասիրութիւն ախ-

տական պատճառներէ կենդանական հիւսուածոց մէջ ներմուծեալ փոփոխութեանց, իւր գիտական գործունէութիւնն յիրաւի ամենամեծ եղաւ. արտաբանութեան ամէն ճիւղերուն մէջ արդիւնաւոր հանդիսացաւ, կրնանք ըսել ստեղծելով 'ի հիմանց ամբողջ վարդապետական մարմիններ, ինչպէս հիւսուածային արտաբանութիւնը և այտոյցներու վարդապետութիւնը. իւր առնթրեալակայ օգնականներուն ալ առատապէս բաշխելով նորանոր խուզարկութեանց համար ծրագիրներ և հմտալից խորհուրդներ:

Երիտասարդ հասակէն՝ վարդապետական հրապարակաստութեամբ զբաղեցաւ, և սակաւուց շնորհեալ բաղդով մը՝ բազմաթիւ տարիներ նուիրեց ուսուցչութեան և ուսումնական հետախուզութեանց, իւր առաջին համալսարանական դադարն եղաւ Քէնսիկպէրկ, յետոյ վիւրցպուրկ և քիչ վերջն ալ Պերլին, — Ներկայապէս ալ կ'ուղղէ այս քաղքին արտաբանական և բժշկական հաստատութիւնը. Պերլինի բժշկական ընկերութեան գործունեայ և մշտական նախագահն է, յորում կրնանք ըսել թէ ամէն գումարման՝ յայտնի կը տեսնուի իր բանից և վարդապետութեանց հեղինակութիւնը: Այս ընկերութեան Արձանագրութեանց, զոր ինքն հիմնեց 1848ին, և զոր կրնանք ճշգրիտ հայելի ըսել գերմանական բժշկութեան շարժման և զարգացման, վերջին թուղթն մէջ նոյն իսկ վիրիսով կը գրէր առաջին յօդուածը՝ ապացուցանելով իւր հիւսուածային արտաբանութեան արգասիքն, որ դէմ կը դնէ հաստատութեամբ ամէն նորելուկ և անհիմն կարծեաց. և կը զգուշացնէ զբժիշկս ընդդէմ վտանգաց խժրիծ և անարգասաւոր հետախուզութեանց, որք զմարդ իւր գլխաւոր նպատակէն շեղել կու տան աւելորդ և անպէտ զբաղանք յոգնեցնելով մտաւոր գործունէութիւնն: Բրուսիական խորհրդարանին մէջ՝ յառաջագիմական կուսակցութեան երեսփոխան է, ուր յաճախ կը խօսի և միշտ խորհրդածութեան կ'առնուին իւր բանախօսութիւնք, մանաւանդ երբ հասարակաց կրթութեան կամ առողջաբանութեան վրայ ճառէ: Գերմանացի այլ գիտնոց նման համայնագիտական հանուածին մ'ունի, մանաւանդ գեղեցիկ դպրութեանց և իմաստասիրութեան. իւր զանազան ինկրոց հաշտաճոյիս մէջ այժմեան բժշկական սղղութեան վրայ քանի մ'էջ գրած է, որ բոլոր ինքեան կրնան մրցիլ փորձառական դրութեան վարժապետաց գրածին հետ: Ամենուն ծանօթ է իւր մարդաբանութեան և հնախօսութեան վրայ ունեցած սէրը, և Տրոյիոյ աւերակաց վրայ կատարած հետազոտութիւնք: Բովանդակ Գերմանիոյ համալսարանաց բժշկական ամբոնոց ուսուցիչք՝ մեծաւ մասամբ իւր աշակերտ-

ներն են . և նոյն ազգին ամէն գիտական հրատարակութիւնք քանի մ'ամիս առաջ իւր կենսագրութեամբ լեցուն էին , զոր իւր աշակերտաց յաջողագոյնք խմբագրած էին . շատերէն աւելի նախամեծարեալ 'ի բաղդէն՝ դեռ ևս կենդանի՝ կը վայելէ իւր աշխատութեանց և ջանից պտուղն . բովանդակ գիտական աշխարհն , իւր եօթանասներորդ տարեդարձին 'ի յիշատակ նուիրեց իրեն ոսկեայ մետալ մը :

Աւելորդ է այս սխնակաց մէջ մի առ մի յիշատակել վիրիսովի ուսումնական ամէն տիտղոսները . արդէն քիչ մը վերն յիշատակեցինք իւր գլխաւոր գործն և արդիւնքն . ուսումնասիրեց և քննեց նա մարմնոյ ախտաբանական փոփոխութիւնք այնպիսի միջոցով մը որ իրմէ անմիջապէս քիչ առաջ սկսեւ էր դրապէս և օգտակար կերպով գործածուիլ ի յուսումն բնական գիտութեանց , այսինքն մանրացուցիւ : Մեծ ջանիւ և ճշդիւ քննեց և հետազօտեց , և իր գիտողութեանց արգասիք եղան բազմաթիւ օրէնք . այսպիսի ճիշդ և շոյափելի հիման մը վրայ հաստատած իր գիտութիւնը պիտի յարատեւէ շարունակաբար բժշկութեան ուսման մէջ , տարբերելով նախ քան զինքն և իրմէ վերջը գրուած անհամար բժշկական գործերէ , որք անծանօթ մնացած են փորձառական գրութեան :

Թերեւս ոմանց ծագրը շարժէ վիրիսովի այս միակ պարծանքը . ենթադրելով որ մարդկութեան շատ աւելի օգտակար կ'ըլլար՝ եթէ ազդու մասնագէդ մը գտնէր այս ինչ կամ այն ծանր խօթութեան . ներկայ դարուս մէջ երբ բժշկական ասպարիզի մէջ գիտական գիւտ մը գտնուի , բնականապէս նախնական փորձերու մէջ՝ գտողն թէ յաջող դէպքեր կ'ունենայ և թէ անյաջող . նախընթացները ռամկերն աչքէն անծանօթ մնալով՝ միայն վերջնով կը դատեն և կը ծաղրեն խեղճ գիտնականը . ոմանք կը հարցունեն իսկ թէ կ'արժէր արդեօք այնչափ դրամ վատնել և միտք յոգնեցնել մի այսպիսի անօգուտ և ծիծաղաշարժ գիւտի համար . երբ նոր գիւտի մը լուրը կը լսուի՝ իսկոյն կը պահանջեն որ գործադրուի անփնաս կերպով . այս բանս անկարելի է , և բժշկութենէ զատ՝ ոչ մի գիտութեան կամ ուսման մէջ կը հանդիպի : Սակայն ժողովրդեան այս պահանջն ալ դրական և հիմնական պատճառ մ'ունի . խեղճ մարդկութեան համար ստիպողական հարկ մ'է վայրկեան մ'առաջ իւր ցաւերը մեղմելը : և մինչդեռ բնագիտական և բնաբանական գիւտերուն առթիւ համբերութեամբ և երկայնամտութեամբ կրսպասէ նոցա հաստատուելուն և զարգանալուն և ապա արդիւնաբեր արգասեաց 'ի գործադրութեան , ընդհակառակն միայն բժշկութեան նկատ .

մամբ այս համբերութիւն ցոյց չի տար, և կը պախարակէ իսկ զայն՝ եթէ անմիջական գործադրելի արդիւնք մի չիմատուցանէ։ Եւ սակայն գիտական շարժումը հաւասարապէս յամր է ամէն ուսման համար. գործադրելու համար՝ պէտք է լաւ ճանաչողութիւն ունենալ, և եթէ բազմաթիւ և գործադրական թանկագին ծանօթութիւնք՝ ի բժշկութեան արդիւնք եղան դիպաց և կամ թելադրութեանց, նոյնը հանդիպեցաւ նաև միւս գիտութեանց՝ իրենց փորձառական շրջանէն առաջ. սակայն բժշկութիւնը այլ ևս չի կրնար մնալ այս անորոշ և տարտամ հորիզոնին մէջ, Երբ Գալիլէոս իր հեռադէտ գործին կ'ուղղէր յաստեղազարդ կամարն՝ և կ'որոշէր նորա աստեղաց ընթացքն՝ Նեւտոն ալ բարձրագոյն հաշուով ծանրութեան օրէնքն կը սահմանէր. իսկ վոլդա և Կալվանի ելեկտրութիւնը կը գտնէին. արդ այս ամէնն ալ իրենց գիտով ինչ անմիջական արգասիք մը կու տային մարդուս։ Նմանօրինակ կարծեօք՝ մարդկութիւնը շատ աւելի երախտապարտ պէտք է լինի շոգին, հեռագիրն և հեռաձայնը գտողաց՝ քան վերոյիշելոց. սակայն սա ալ ստոյգ է թէ առանց նախընթացներուն՝ յաջորդներն ալ չէին կատարուեր. նոքա ուսուցին փորձից և քննութեան կերպը, բնութիւնն ուսումնասիրելու և զայն հետազօտելու եղանակն։

Այս տեսակէտով բժշկութիւնն յանհունա երախտապարտ պէտք է գտնուի առ վիրխով, և արդէն դեռ իւր մահկանացուն չկրնա քած՝ ամէն օր նորանոր գիտեր և սկզբունքներ կը տեսնէ արգասիք իւր դրութեան. հիւսուածոց վրայ ելած հիւանդութեանց մանր և խղճամիտ քննութիւն. խօթութեանց բուն պատճառն և ընթացքն մեզ կը յայտնէ, և հետեւաբար բժիշկն ալ առաւելագոյն վստահութեամբ և ճշդիւ կը գարմանէ։